ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/63

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.11.2017թ. թիվ 03/26-3/20703-17 գրությամբ «Դեագա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.11.2017թ. թիվ ԴՎԱ/4021 գրության հիման վրա, 13.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Դեագա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.11.2017թ. թիվ ԴՎԱ/4021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դեագա» ՍՊԸ-ն: Անգործության ժամկետի ավարտից հետո հոկտեմբերի 13-ին «Դեագա» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել պայմանագրի ապահովումով ներկայանալ հոկտեմբեր ամսվա խմբաքանակի համար պայմանագիր ստորագրելու, սակայն «Դեագա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 27-ը չի ներկայացել պայմանագիր ստորագրելու»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Աշոտ Գրիգորյանը:

3. <u>« Դեագա » ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դեագա» ՍՊԸ-ն 27.10.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով մասնավորապես հայտնել է.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից (այսուհետնա՝ պատվիրատու) կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգ: Ընթացակարգի տեքստը հաստատվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. օգոստոսի 1-ի թիվ մեկ որոշմամբ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2017թ. օգոստոսի 9-ը:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն և 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել հաղթող մասնակից:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով՝ գնման ժամանակացույցով, 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով մատակարարումը նախատեսվել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում:

Սակայն «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացրել միայն 2017թ. հոկտեմբերի 9-ին /ծանուցումը կցվում է/, ընդ որում պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի նախագծի համաձայն՝ մատակարարումը նույնպես սահմանվել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում:

Ընկերությունը առարկել է պայմանագրով նախատեսված գնման ժամանակացույցի դեմ՝ հայտնելով, որ հոկտեմբեր ամսին կնքված պայմանագրով չի կարող սահմանվել մատակարարում և սեպտեմբեր, և հոկտեմբեր ամսվա համար:

Ի պատասխան ընկերության առարկությանը՝ պատվիրատուն 2017թ.հոկտեմբերի 13-ին «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին ուղարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով պայմանագրի նոր նախագիծ՝ գնման ժամանակացույցը սահմանված միայն հոկտեմբեր ամսվա համար՝ պայմանագրի ստորագրման համար սահմանելով վերջնաժամկետ՝ մինչև ս.թ. հոկտեմբերի 27-ը:

«ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն պատվիրատուին ուղղված 24.10.2017թ. գրությամբ /կցվում է/ հայտնել է հետևյալը. «Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ կարիքների համար լոլիկի և վարունգի ձեռք բերման ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով մրցույթին: Հայտերի բացումը տեղի է ունեցել 09.08.2017 թ.: Նշեմ նաև այն հանգամանքը, որ մատակարարումը, ըստ հրավերի, պետք է իրականացվեր սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Հայտերի բացումից միայն երկու ամիս հետո՝ 09.10.2017 թ. ընկերության էլ.հասցեին ուղարկվեց կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ որտեղ հավելված 4-ում առաջարկված էր լոլիկի 16940 կգ սեպտեմբեր և վարունգի 16940 կգ հոկտեմբեր ամիսների մատակարարվելիք քանակները: «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն չկնքեց պայմանագիրը, քանի որ արդեն հոկտեմբեր ամիսն էր: 13.10.2017թ. ընկերությանը ուղարկվեց մեկ ուրիշ պայմանագրի նախագիծ, որտեղ հավելված 4-ում առաջարկված էր մատակարարել միայն հոկտեմբեր

ամսվա խմբաքանակը՝ լոլիկ 8500 կգ, վարունգ 8500 կգ, կից պայմանագրի նախագիծը: «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն հայտնում է, որ այդ առաջարկված պայմանագիրն էլ չի կնքելու, քանի որ ընկերությունը հանդիպել է մի շարք խոչընդոտների: Եթե պայմանագիրը կնքվեր ժամանակին, ապա «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն մատակարարումը կիրականացներ առանց վարանելու, քանի որ սեպտեմբեր ամսին լոլիկի և վարունգի ձեռքբերման ինքնարժեքը ցածր էր և ամբողջ խմբաքանակը հնարավոր կլիներ մատակարարել: Նաև լոլիկի և կառնիշոն տեսակի վարունգի որակը՝ կախված սեզոնից, ավելի բարձր էր, քան հիմա, որ այլևս կառնիշոն տեսակի վարունգ չկա, իսկ լոլիկը դաշտից հավաքվում է դեղնած վիճակում: Նաև պայմանագրի կնքման վերջնաժամկետը 20.10.2017թ. է, դրանից հետո այդպիսի քանակներով լոլիկ՝ 8500 կգ և վարունգ՝ 8500 կգ ձեռք բերելը անհնար է: Ինչպես նշվեց, կառնիշոն տեսակի վարունգ այլևս չկա, նաև ստվարաթղթե արկղները համապատասխան մակնշումով պատրաստելու համար օրեր են պետք: Եվ ամենագլխավոր պատճառն այն է, որ լոլիկի և վարունգի ձեռքբերման արժեքը երեք անգամ գերազանցել է ընկերության կողմից ներկայացված արժեքից: Հայցում ենք Ձեր ողջամիտ որոշմանը, խնդրում ենք Ձեզ, ընկերության կողմից շահած Երևանի տարածաշրջանի լոլիկի և վարունգի պահանջարկը համարել ավարտված և ընկերությանը տալ հնարավորություն չկնքելու պայմանագիրը: Նշեմ նաև, որ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն բարեխիղճ մատակարարել է ՀՀ պաշտպանության նախարարության սեպտեմբեր ամսվա կարտոֆիլը»:

Նույնաբովանդակ գրություն 24.10.2017թ. ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանին:

Ի պատասխան ընկերության 24.10.2017թ. գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.10.2017թ. թիվ ԴՎԱ/3852 գրությամբ ընկերությանը հայտնել է հետևյալը. «Ի պատասխան Ձեր՝ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում լոլիկի և վարունգի մատակարարման պայմանագրեր չկնքելու վերաբերյալ գրություններին, հայտնում եմ, որ Ձեր խնդրանքը բավարարելու համար իրավաչափ հիմքեր չկան, ուստի անհրաժեշտ է սահմանված կարգով կնքել ս.թ. հոկտեմբերի 13-ին Ձեզ ուղարկված պայմանագրի նախագիծը, հակառակ դեպքում «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն օրինաչափ բոլոր համապատասխան միջոցները:

Ինչպես հետևում է «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին ուղղված ՀՀ ՊՆ 30.10.2017թ. թիվ ԴՎԱ/3852 գրությունից՝ ընկերությունը 24.10.2017թ. գրությամբ խնդրել է տալ հնարավորություն չկնքելու պայմանագիրը, մինչդեռ նշված գրության պատասխանը պատվիրատուն ընկերությանը ուղարկել է պայմանագիրը կնքելու համար սահմանված վերջնաժամկետը /27.10.2017թ./ լրանալուց հետո, այն է՝ 30.10.2017թ.:

Նշված փաստերը վկայում են, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր բոլոր գործողություններով խախտել է օրենքով սահմանված ողջամիտ ժամկետի սկզբունքը:

ՀՀ ՊՆ, նախ, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգով հայտերի բացումը իրականացրել է 2017թ. օգոստոսի 9-ին, իսկ պայմանագիր կնքելու առաջարկ է ուղարկել միայն հոկտեմբերի 13-ին /վերջնաժամկետ՝ հոկտեմբերի 27/, այն դեպքում, երբ կնքվելիք պայմանագրով մատակարարումը նախատեսված էր իրականացնելու 2017թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին:

Այնուհետև ընկերության 24.10.2017թ. պայմանագիր չկնքելու հնարավորություն տալու վերաբերյալ գրությանը, պատվիրատուն պատասխանել է միայն 30.10.2017թ., այն է՝ պայմանագիրը կնքելու համար սահմանված վերջնաժամկետը լրանալուց հետո, մինչդեռ չի բացառվում, որ ժամանակին մերժումը ստանալու դեպքում ընկերությունը կնքեր «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, ուստի խնդրում ենք հաշվի առնել սույն գրությամբ նշված փաստարկները և ընկերությանը չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված խախտումը, և որպես հետևանք «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչ Հասմիկ Հարությունյանը, ինչպես նաև Խորհրդում Ընկերության շահերի ներկայացման կապակցությամբ ներգրավված՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/63 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2017թ. թիվ 03/26-3/20703-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.11.2017թ. թիվ ԴՎԱ/4021 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 20.09.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 և 03.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, Պատվիրատուի՝ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին 09.10.2017թ. և 13.10.2017թ. ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումները, «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի 24.10.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությունը և Պատվիրատուի 30.10.2017թ. թիվ ԴՎԱ/3852 գրությամբ Ընկերությանը տրամադրված պատասխանը, «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի Խորհրդին ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 20.09.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ Ընկերությանը ճանաչել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրության 1.3 կետով Հանձնաժողովը որոշել է հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած թիվ 5 նիստի արձանագրության 1.1 կետով արձանագրել է հետևյալը.

«Հաշվի առնելով գնահատման տարբեր փուլերում մասնակիցների որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամկետները, ինչպես նաև այն, որ մասնակցի հայտը գնահատելու համար գրություն է գրվել լիազոր մարմին պարզաբանում ստանալու համար, փաստացի հնարավոր չեղավ պայմանագիրը կնքել հրավերով նախատեսված գնման ժամանակացույցին համապատասխան, այդ իսկ պատճառով պատասխանատու ստորաբաժանման կողմից ուղարկվել է նոր գնման ժամանակացույց՝ առաջարկելով սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա քանակների մատակարարումները տեղափոխել մինչև դեկտեմբերի 1-ը:

Անգործության ժամկետի ավարտից հետո (03.10.2017թ.) հոկտեմբերի 9-ին «Դեագա» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի ապահովումով ներկայանալ պայմանագիր ստորագրելու: Քանի որ անգործության ժամկետն ավարտվել է հոկտեմբերի 3-ին, պատասխանատու ստորաբաժանման կողմից ուղարկվել է գրություն, որ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով սեպտեմբեր ամսվա պահանջարկը վերացել է և առաջարկվում է սեպտեմբեր ամսվա պահանջարկի մասով պայմանագիր չկնքել:

Հոկտեմբերի 13-ին «Դեագա» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի ապահովումով ներկայանալ հոկտեմբեր ամսվա խմբաքանակի համար պայմանագիր ստորագրելու, սակայն «Դեագա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 27-ը չի ներկայացել պայմանագիրը ստորագրելու»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 17.11.2017թ. կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց, որ Ընթացակարգի անգործության ժամկետի ավարտից հետո՝ հոկտեմբերի 13-ին, «Դեագա» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին ուղարկվել է ծանուցում՝ ներկայանալ ստորագրելու հոկտեմբեր ամսվա խմբաքանակի համար պայմանագիր, սակայն «Դեագա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 27-ը, չի ներկայացել ստորագրելու պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների

գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 20-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին, իսկ 21-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկն ստացած մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Հրավերի՝

- 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
- 9.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:
- 9.7 կետի համաձայն՝ մինչև նույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«Դեագա» ՍՊԸ-ն գրությամբ (մտից N 49869 առ 02.11.2017թ. 02.11.2017թ.) դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանում ստեղծված իրավիճակի համար Ընկերության պատասխանատվության վերաբերյալ: Գրությամբ մասնավորապես, հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացումից մեկ ամիս հետո՝ 09.10.2017թ. Ընկերությունը էլեկտրոնային եղանակով ստացել է կնքվելիք պայմանագրի նախագիծը, որտեղ Ընկերությանն առաջարկվել է մատակարարել միայն հոկտեմբեր ամսվա ապրանքի

խմբաքանակը: Ընկերությունը՝ դիմելով ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետին, խնդրել է թույլ տալ չկնքել պայմանագիրը, սակայն վերջինս ներկայացրել է պատասխան՝ առաջարկելով կնքել պայմանագիրը, և նախազգուշացնելով՝ պայամանգիրը չկքելու դեպքում օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցները կիրառելու մասին:

Պաշտոնական ընթացակարգի քննության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը Խորհրդին է ներկայացրել «Դեագա» ՍՊԸ-ի վերը նշված գրության վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրության պատճենը:

Լիազորված մարմինը նշված գրության վերաբերյալ մասնավորապես հայտնել է հետևյալը.

Հաշվի առնելով, որ պայմանագիր կնքելու առաջարկությունը Ընկերությանը ներկայացվել է 13.10.2017թ., և պայմանագրի հաստատման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները՝ ուստի Ընկերության կողմից հնարավոր չէ նշված ժամանակահատվածում ապահովել գնման ժամանակացույցով սահմանված մատակարարման ժամկետները:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից համակարգի միջոցով պայմանագիր կնքելու առաջարկությունը «Դեագա» ՍՊԸ-ին ներկայացվել է 13.10.2017թ., որով Ընկերությանն առաջարկվել է ապահովել 2017թ. հոկտեմբեր ամսվա ապրանքի խմբաքանակի մատակարարումը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից Հրավերով նախատեսված Պայմանագրի նախագծում կատարվել է փոփոխություն՝ մասնավորապես, Պայմանագրից հանվել է սեպտեմբեր ամսին նախատեսված մատակարարման խմբաքանակը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են և դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի՝

• 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

• 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ փոփոխություններ կատարելով Պայմանագրի նախագծում՝ խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 4-ին մասով և Հրավերի 9.7 կետով սահմանված պահանջները, քանի որ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ ստեղծված իրավիճակում Ընկերությունը օբյեկտիվորեն զրկվել է պայմանագրով նշված ժամանակահատվածում գնման ժամանակացույցով սահմանված մատակարարումն իրականացնելու հնարավորությունից, հետևաբար, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.11.2017թ. «Դեագա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**